

շատակուի « առաջին մեծ գաղթականութիւնն », վասն զի իրօք ալ Հայք 1418ին մեծ բազմութեամբ, այն է 3000 ընտանիք, Մոլտաւիա գաղթած են³³. ապա թէ ոչ՝ չի կրնար մեկնուիլ՝ թէ ո՞վ շինած է 1350ին Պոթուշանի եւ 1395ին Եաշի հին հայ եկեղեցիները:

Հայոց կանուխ ժամանակաւ ի Մոլտաւիա թէեւ նուազագոյն թուով գաղթած ըլլալուն կը վկայէ նաեւ այն պարագայն, որ, ինչպէս յիշեցի, Պետրոս Մուշաղ մոլտաւիացի իշխանն՝ Մոլտաւիոյ վաճառական Հայերն, թերեւս անոր համար որ սակաւաթիւ ըլլալով առանձին եպիսկոպոս մ՝ ունենալ կարելի չէր, արդէն 1384ին ի հոգեւորս Լեմպերկի արեւելեան հայ եպիսկոպոսին իրաւաբանութեան ենթարկեց:

Այս ամէն ըսուածներէն կրնայ ստուգութեամբ հետեւցուիլ, որ Մոլտաւիոյ եւ այսօրւան Պուքովինայի Հայերն նոյն երկիրներու ամենահին բնակիչներէն են:

Յամին 1418 Աղեքսանդր Բարի մոլտաւիացի իշխանն ի Մոլտաւիա գաղթող 3000 հայ ընտանիքներն յաջորդ եօթը մոլտաւական քաղաքներն բնակեցուց³⁴. Սուշավա, Չէթաթէա ալպա, ուր արդէն 1421ին Կիլպերդ տէ Լանուա զիրենք գտաւ, Կալաց, Վասլույ, Պոթուշան, Տորոհոի եւ Հոթին³⁵:

Այս 3000 հայ ընտանեաց իրենց հայրենիքը թողլով Մոլտաւիա գաղթելուն պատճառն՝ իրենց երկրին մէջ այն ժամանակները տիրող կրօնական խռովութիւնն է: Հռոմայ Քահանա-